Հ ա վ ե լ վ ա ծ № 3

Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի պետի « 14 » 03 2019 թ. թիվ 145 - Ա հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԲԱԺՆԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնադրությամբ կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի (այսուհետ՝ Կրթահամալիր) ուսումնամեթոդական և զարգացման վարչության միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի (այսուհետ՝ Բաժին) հիմնական խնդիրներին, գործառույթներին և ղեկավարմանը առնչվող հարցերը:

2. Բաժինը Կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության կառուցվածքային ստորաբաժանում է, որն ապահովում է օտարերկրյա պետությունների ոստիկանական ուսումնական հաստատությունների հետ միջազգային համագործակցությունը, կրթական գործընթացի միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրությունը, ուսումնական գործընթացի բարելավման և արդիականացման նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը:

3. Բաժնի հաստիքակազմը հաստատվում և փոփոխվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով:

4. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության իրավական ակտերով, Կրթահամալիրի ու Կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության կանոնադրություններով, Կրթահամալիրի ներքին իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

5. Բաժնի կանոնադրությունը հաստատվում և դրանում փոփոխություններն ու լրացումները կատարվում են Կրթահամալիրի պետի հրամանով:

II. Բաժնի հիմնական խնդիրները

6. Բաժնի հիմնական խնդիրներն են՝

1) օտարերկրյա պետությունների ոստիկանական ուսումնական հաստատությունների հետ համագործակցության, փոխօգնության և զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացում,

2) ուսումնական գործընթացի բարելավման և արդիականացման նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում,

3) Հայաստանի Հանրապետության ոստիկանության համար որակյալ կադրերի պատրաստման գործում կրթական գործընթացի միջազգային առաջավոր փորձի, ուսուցման նորագույն տեխնոլոգիաների ուսումնասիրություն և ներդրում,

4) օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունների, օտարկրյա կազմակերպությունների հետ համագործակցության երկկողմ և բազմակողմ արձանագրությունների, հուշագրերի և պայմանագրերի նախագծերի մշակում, դրանց կնքման և նրանցում ներառված դրույթների կատարման ապահովում,

5) այլ պետություններից ստացված հրավերների ուսումնասիրության, Կրթահամալիրի ծառայողների օտարերկրյա պետություններ գործուղումների կազմակերպման, ինչպես նաև արդյունքների ամփոփման և գործուղումների հաշվառման իրականացում,

6) պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ անձնակազմի և սովորողների շարժունությանը նպաստող ծրագրերի պլանավորում և իրականացում,

7) Կրթահամալիրի կայքէջի սպասարկում և անխափան աշխատանքի ապահովում, տեղեկատվության տեղադրում:

III. Բաժնի հիմնական գործառույթները

7. Բաժնի հիմնական գործառույթներն են՝

1) օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունների, օտարկրյա կազմակերպությունների հետ համագործակցության երկկողմ և բազմակողմ

արձանագրությունների, հուշագրերի և պայմանագրերի նախագծերի մշակում, դրանց կնքման ապահովում,

2) օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունների, օտարկրյա կազմակերպությունների հետ կնքված արձանագրությունների, հուշագրերի և պայմանագրերի դրույթների կատարման կազմակերպում և ապահովում,

3) Կրթահամալիր այցելած պատվիրակությունների ընդունելության աշխատանքների կազմակերպում, լուսաբանում և անհրաժեշտության դեպքում անմիջական մասնակցություն,

4) միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման շրջանակներում ուսումնասիրությունների իրականացում և առաջարկությունների ներկայացում,

5) միջազգային համագործակցության շրջանակներում օտարերկրյա պետությունների ոստիկանական ուսումնական հաստատություններում կիրառվող կրթական մոդելների, ուսումնական գործընթացի առանձնահատկությունների և արդի մոտեցումների ուսումնասիրում,

6) Կրթահամալիրի միջազգային գործունեության շրջանակներում թարգմանչական աշխատանքների իրականացում,

7) գործուղումներ մեկնող Կրթահամալիրի ծառայողների փաստաթղթերի գրանցում, հաշվառում և հաշվետվության ներկայացմանը աջակցում,

8) տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման շրջանակներում օտարերկրյա պետությունների ոստիկանական ուսումնական հաստատություններում կիրառվող նորագույն ծրագրերի ուսումնասիրում և առաջարկությունների ներկայացում,

9) Կրթահամալիրի կայքէջի անխափան աշխատանքի ապահովում, ինչպես նաև դրա արդիականացման վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքում առաջարկությունների ներկայացում,

10) տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում նոր զարգացումների և ծրագրերի կիրառման արդյունավետության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

11) տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում շահագրգիռ այլ ծառայությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովում,

12) Կրթահամալիրի համակարգչային տեխնիկայի ծրագրային ապահովում և տեխնիկական աշխատանքների իրականացում,

13) «Սերվեր» համակարգչի անխափան աշխատանքի ապահովում,

14) համակարգչային ցանցի անխափան աշխատանքի ապահովում, սպասարկում և համակարգում, օգտատերերի IP հասցեների սահմանում,

15) Կրթահամալիրում ներդրված կառավարման ավտոմատացված համակարգերի սպասարկման խնդիրների ուսումնասիրության և վերլուծության իրականացում, ինչպես նաև այդ համակարգերի տեղայնացման, կարգավորման աշխատանքների իրականացում և ծրագրային սպասարկում: Համակարգչային ծրագրերի և տեխնիկական միջոցների արդիականացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում:

IV. Բաժնի ղեկավարումը

8. Բաժինը գործում է Կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետի անմիջական ենթակայության տակ:

9. Բաժնի գործունեությունը ղեկավարում է բաժնի պետը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով: Բաժնի պետը կազմակերպում ու համակարգում է բաժնի աշխատանքները և ապահովում դրանց իրականացումը: Բաժնի պետի բացակայության ժամանակ նրա պարտականությունները կատարում է Բաժնի պետի տեղակալը:

10. Բաժնի պետի և աշխատակիցների կողմից իրականացվող աշխատանքները կարգավորվում են իրենց գործառութային պարտականություններին համապատասխան: Նրանց գործառութային պարտականությունները հաստատում է Կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետը: